ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Թամարա Բաղդասարյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Ռուբեն Հակոբյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Մելքոնյանի, Լիլիթ Ղազանչյանի և Դավիթ Վարդիկյանի,

քննության առնելով Պալատի հաշվիչ հանձնաժողով կազմավորելու մասին հարցը,

հիմք ընդունելով Պալատի նախագահ Սիմոն Բաբայանի կողմից հաշվիչ հանձնաժողովի անդամների թեկնածությունների առաջադրումը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 5-րդ ենթակետի, ինչպես նաև Պալատի կանոնադրության 8.1, 8.3, 8.5 կետերի, 16.5 կետի 5-րդ ենթակետի պահանջներով,

միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Կազմավորել ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողով՝ երեք տարի ժամկետով:***
2. ***ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովի անդամներ նշանակել ներքոնշյալ փաստաբաններին.***

1) Գևորգ Գրիշայի Գևորգյան (արտոնագիր № 81)
2) Գագիկ Մայիլյան (արտոնագիր № 839)
3) Կարինե Ղաշանգյան (արտոնագիր № 1999)
4) Հովհաննես Եգորյան (արտոնագիր № 2671)
5) Աշոտ Խլոյան (արտոնագիր № 2018)
6) Հեղինե Մանուկյան (արտոնագիր № 2508)
7) Նազիկ Մալխասյան (արտոնագիր № 2617)
8) Հասմիկ Թադևոսյան (արտոնագիր № 2778)
9) Կատյա Գաբոյան (արտոնագիր № 3572)

03 հոկտեմբերի 2025թ.
թիվ 21/25-Ա

3. ***Սահմանել, որ ՀՀ փաստաբանների պալատի հաշվիչ հանձնաժողովը գործում է 2025 թվականի հոկտեմբերի 11-ից մինչև 2028 թվականի հոկտեմբերի 11-ը (ներառյալ):***

4. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել հաշվիչ հանձնաժողովի նորանշանակ անդամներին:***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

03 հոկտեմբերի 2025թ.
թիվ 21/25-Ա
ք. Երևան